ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1959 Общественные науки

Հ. Մ. Եգանյան

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՐԿՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՆՈՒՄ

Ամերիկյան և անգլիական իմպերիալիստները, Իրանը վերածելով արդյունաբերական ապրանքների սպառման շուկայի և հումքի բազայի, ընդգրկելով նրան իրենց ագրեսիվ ռազմական պլանների մեջ, միաժամանակ աշխատում են կոնսերվացիայի ենթարկել ու կայունացնել Իրանում իշխող ֆեոդալական-կալվածատիրական հարաբերությունները և ֆեոդալական կախման մեջ պահել բազմամիլիոն իրանական գյուղացիությանը։ Իրանում ֆեոդալական-կալվածատիրական հարաբերությունների կոնսերվացիայի իրենց քաղաքականությունը հիմնավորելու համար, ամերիկա-անգլիական իմպերիալիստները ցինիկաբար հայտարարում են, որ իբր թե այդ կարգերը Իրանի համար լավագույնն են, և որ ֆեոդալական կարգերի վերացումը, իբր կխախտեր ամբողջ երկրի էկոնոմիկան։ «Կիսաֆեոդալական գյուղը,— գրում է ամերիկյան «Journal of Farm Economics»-ը,— Միջին Արևելքի գյուղատնտեսության սոցիալ-տնտեսական ինստիտուտն է։ Այդ ինստիտուտի հանկարծակի վերացումը (ընդգծումը մերն է—Հ. Ե.) կոչնչացնի կամ, լավագույն դեպքում լրջորեն կվնասի, գոյություն ունեցող միակ սոցիալական մեքենան, որը, եթե հաշվի չառնենք հողային ռեֆորմը, ուղի է հարթում ժողովրդի զարգացման համար։ Շատ ավելի լավ է օգտագործել գոյություն ունեցող մեքենան և թողնել, որ հողային ռեֆորմը տեղի ունենա առողջապահության, կրթության և գյուղատնտեսության կատարելագործումներին զուգահեռ»[1]։ Ամերիկյան իմպերիալիստները ընդունում են, որ երկիրը պետք է որոշ չափով զարգացնել, թեկուզ հենց այն պատճառով, որ «հետամնաց երկրները,—գրում է նույն ժուռնալը,—ընդհանրապես լավ շուկաներ չեն հանդիսանում», պետք է «օգնել նրանց, որ նրանք ավելացնեն իրենց արտադրողականությունը», որպեսզի դառնան «լավ շուկա», այսինքն ամերիկյան իմպերիալիստների արդյունաբերական ապրանքների սպառման շուկա և հումքի աղբյուր։ Իսկ ի՞նչ պիտի անել գյուղատնտեսական երկիրը զարգացնելու համար։ Հենց այդտեղ էլ ամերիկյան իմպերիալիստները հանդես են գալիս ֆեոդալական-կալվածատիրական կարգի պաշտպանի դերում։ «Որևէ ռևոլյուցիոն շարժում,— գրում է ժուռնալը,— որը կհասցնի կալվածքների բռնագրավմանն ու բաժանմանը՝ առանց փոխհատուցելու նախկին տերերին, իհարկե հարցի լուծումը չէ», իսկ ռևոլյուցիայի սարսափը փարատելու համար նրանք հայտարարում են, որ «այդ ուղղությամբ աշխատող ռեալ ուժ էլ չկա Իրանում», բայց քանի որ «որևէ երկրում, որտեղ շահագործվող մեծ թվով գյուղացիություն կա, ռևոլյուցիոն շարժումը միշտ էլ պոտենցիալ սպառնալիք է», ապա պետք է կիրառել, «կոնստրուկտիվ մեթոդներ», որպեսզի եթե երբևիցե ռեֆորմը իրականացվի, ապա այն «ռեալ և մշտական օգուտներ» տա[2]։ Իսկ

---

[1] „Journal of Farm Economics", USA, 1948, vol. XXX, № 3, p. 438.

[2] *Նույն տեղում, էջ 439։*

որո՞նք են այդ «կոնստրուկտիվ մեթոդները»։ Իրանում ԱՄՆ-ի դեսպանության նախկին կցորդ Հագարին հայտարարում է, որ իրանական գյուղացուն «ավելի շատ տնտեսական և սոցիալական անկախություն» տալու համար, կան երեք եղանակներ՝ «ռեֆորմ արտալեգալ միջոցներով, կառավարության կողմից անցկացրած հիմնական ռեֆորմներով, կամ ներկա սոցիալական շրջանակներում ադմինիստրատիվ և տեխնիկական բարեփոխումների միջոցով»[3]։ Առաջին եղանակը ամերիկա-անգլիական իմպերիալիստների կարծիքով միանգամայն ընդունելի չէ։ Ինչո՞ւ։ Քանի որ, ինչպես դրում է անգլիական «Դեյլի Մեյլ» թերթը, «Իսլամի կրոնը գյուղացիներին կոչ է անում, որ սեփականության օրենքներին ու կարգին մեծ հարգանք տածեն»[4]։ Նշանակում է, հողերի այդպիսի բաժանումը կխախտեր Իսլամի դոգմաները, իսկ անգլիական իմպերիալիստներն էլ «հարգելով» Իսլամը չեն կարող այդ բանին համաձայնվել։ Բացի այդ, դա կնշանակեր կոմունիզմ։ Ամերիկա-անգլիական իմպերիալիստների կարծիքով հողերի այդպիսի բաժանումը «ոչ մի ձևով չի լուծի պրոբլեմը», քանի որ ըստ նրանց «իրանական գյուղացին, լայնորեն ասած, հաճախ տգետ է, անտարբեր և հիվանդոտ»[5] և «պատրաստ չէ գյուղատնտեսական անկախ օպերացիաներ կառավարելու բեռը իր վրա կրել»[6]։ Եթե մինչև իսկ ֆեոդալական-կալվածատիրական հարաբերություններն ու խոշոր հողատիրությունը վերացնելու անհրաժեշտություն զգացվի, ապա ըստ նրանց «պետք է, այդուհանդերձ, իմանալ, որ պայմանները դեռ հասունացած չեն այդպիսի միջոցառումների համար» և որպես ապացույց բերում են Խուզիստանի օրինակը, որտեղ իբր թե «իրանական գյուղացին ի վիճակի չէ աշխատել նոր պայմաններում, որոնք պահանջում են աճող անձնական պատասխանատվություն և տեխնիկական գիտելիքներ ու հմտություն»[7]։ Իրանի մասին մեծածավալ աշխատության հեղինակ ամերիկացի Վ. Հասը գտնում է, որ գյուղացին ի վիճակի չէ հող ունենալ, նախ՝ այն պատճառով, որ Իրանի գյուղատնտեսության համար արտակարգ նշանակություն ունեցող «կանաթների կառուցումը և նրանց պահպանումը այնքան թանկ արժե, որ ոչ մի գյուղացի չի կարող այդ պրոբլեմը լուծել առանց ֆինանսական օգնության...» և հետո այն պատճառով, որ «հողագործության նոր մեթոդների և գյուղատնտեսական մեքենաների կիրառումը, գյուղացու ինտելեկտուալ և ֆինանսական կարողությունից վեր է»[8]։ Ուրեմն ըստ նրա գյուղացին հող ստանալու պարագայում կհանդիպի երկու գլխավոր դժվարությունների, դրանք են՝ «կապիտալի պակասը գյուղացու մոտ և նրա փորձի պակասը իր սեփական մշակելի ձեռնարկության կառավարման գործում», նա չի կարող իր հողամասը կառավարել, քանի որ «շատ է վարժվել... կալվածատիրոջ կողմից ղեկավարվելուն»[9]։ Հետևաբար՝ Իրանում գոյություն ունեցող «նահապետական հարաբերությունները հողատերերի ու վարձակալների միջև» շատ ավելի նպաստավոր են «գյուղացիության դժվարությունները թեթևացնելու համար»[10]։ Ամերի-

[3] „Middle East Journal", 1951, № 2, p. 195.
[4] տես՝ (اطلاعات) «Էթթելաաթ», 1952, մարտի 30։
[5] „International Affairs", 1946, vol. XXII, № 2, p. 270.
[6] „Foreign Agriculture", 1953, Feb., p 35.
[7] W. S. Haas, Iran, New-York, 1946, p. 201.
[8] Նույն տեղում, էջ 203։
[9] „Foreign Agriculture", 1953, Feb. p. 35.
[10] W. S. Haas, Iran, New-York, 1946, p. 203.

կա-անգլիական իմպերիալիստները պնդում են, որ «գյուղատնտեսության մեջ իշխող կիսաֆեոդալական ներկա սիստեմի լուծումը, իրականում կիջեցնի ամբողջ արտադրության քանակը...» և հող մշակելու ծախսերը բարձրանալու հետևանքով «...շատ գյուղացիներ դժվարությունների կհանդիպեն»[11]։

Ամբողջ վերոհիշյալից նրանք եզրակացնում են, որ «խելացի չի լինի ասել, թե խոշոր կալվածատիրությունից ոանկարոցակի (ընդգծումը մերն է — Հ. Ե.) գյուղացիական հողատիրության անցնելը գործնական է»[12], այդ գործի համար պահանջվում է երկար տարիների կրթական աշխատանքներ և ֆինանսական ստրուկտուրայի նշանակալից բարեկարգումներ», որը գյուղացուն հնարավորություն կտա աստիճանաբար իր եկամտի մի մասը կողմ թողնելով կապիտալ կուտակել[13], այլ կերպ նրանք ուզում են վարկաբեկել ռևոլյուցիայի միջոցով կամ մինչև իսկ ռադիկալ բուրժուական հողային հարցի լուծելու եղանակը։

Բայց իմպերիալիստական շրջաններում կան մարդիկ, որոնք Իրանի պրոգրեսիվ շարժման հանդեպ բուռն ատելությամբ լցված լինելով հանդերձ, Սովետական Միության և համաշխարհային պրոգրեսի դեմ իրենց պայքարի ընդհանուր պլաններից ելնելով, նեխված և իր դարն ապրած ֆեոդալական կարգերի պահպանման հետ համաձայն չեն և այն գտնում են վտանգավոր։ Օրինակ՝ նրանք գտնում են, որ «փաստորեն գյուղական բնակչության մեջ հողազուրկների համամասնությունը տագնապալի է դառնում...», և քանի որ «մինչև իսկ անգրագետ գյուղացիները արդեն սկսում են հարցնել, թե ինչո՞ւ իրենց աշխատանքից ստացված արդյունքից այդքան քիչ բան են ստանում», և որ այդ «նոր գաղափարները այնքան ուժեղ են, որ այլևս հին բանանը վերականգնել չի կարելի»[14], ուրեմն պետք է անպայման «օգտագործել բոլոր միջոցները» գյուղացիներին հող տալու ուղղությամբ, չնայած, որ դարավոր ֆեոդալիզմի իշխանության պայմաններում «ոչինչ ավելի դժվար չի կարող լինել»[15]։ Նման միջոցառումների դիմելու, այսինքն «հողային սեփականության սիստեմի արմատական փոփոխության, խոշոր կալվածատիրության վերացնելու, և երկրում մեծապես տիրող ֆեոդալական շահագործողական, կալվածատիրության փոխարինումը գյուղացիական հողատիրությամբ և գյուղական կոոպերատիվներով»[16] առաջ էր քաշում Իրանում երկու անգամ «ֆինանսական խորհրդատու» եղած ամերիկացի Միլիսպոն, որը միաժամանակ նշում էր, թե Իրանում «միշտ մի չգրված ու չարտասանված կանխապայման է եղել, այն, որ սոցիալական ռեֆորմները չպիտի դիպչեն իշխող դասակարգերի արտոնություններին կամ դրպանին»[17]։

Այս հարցում ավելի հեռուն է գնում ԱՄՆ-ի գերագույն դատարանի դատավոր Վիլյամ Դուգլասը։ Ըստ նրա «ֆեոդալիզմն է, որ կոմունիզմի ներթափանցման համար ճանապարհ է հարթում», և հետևաբար նա առաջարկում է, որ կոմունիզմի դեմ պայքարելու համար ԱՄՆ-ը չպետք է «ամրապնդի ֆեոդա-

[11] „Middle East Journal", 1951, № 2, p. 182.
[12] A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, 1953, p. 398.
[13] „Foreign Agriculture", 1953, Feb., p. 35.
[14] „The Fortnightly", 1952, № 1022, p. 104.
[15] R. Payne, Journey to Persia, London, 1951, p. 45.
[16] A. S. Millspaugh, Americans in Persia, Washington, 1946, p. 248.
[17] Նույն տեղում, էջ 134։

լիզմը»[18]։ Դուգլասը ակամայից այստեղ մերկացնում է ամերիկյան իմպերիալիստների վարած քաղաքականությունը, որը հետապնդում է ֆեոդալական հարաբերությունների պահպանումը։

Պատերազմի տարիներին և հետպատերազմյան ժամանակաշրջանում դեմոկրատական շարժման աճի, գյուղատնտեսության անկման և երկրի տնտեսական վիճակի ընդհանուր վատթարացման հետևանքով Իրանի իշխող դասակարգերի որոշ ներկայացուցիչները հանդես եկան ագրարային բուրժուական ռեֆորմների անցկացման օգտին՝ դրանում տեսնելով իրենց գոյության շարունակումը։ Օրինակ՝ իրանական բուրժուական մամուլում տպագրված մի շարք հոդվածներում Ֆարհուդին, Նուռ-ol-դին Ուստուանը, Ալինաղի Լաշկարին, Նասիրին և ուրիշները հանդես էին գալիս իրանական գյուղացիության վիճակի բարելավման հարցի լուծման ծրագրերով։ Մեջլիսի դեպուտատ Աշթիանիղադեն, 1950 թ. մարտի 5-ին հանդես գալով մեջլիսի նիստում և խոսելով ռեֆորմներ անցկացնելու անհրաժեշտության մասին, բացարձակ հայտարարեց. «Պարոնայք, կոմունիզմը կանխելու միակ միջոցը — դա ռեֆորմներն են»[19]։

Այժմ կանգ կառնենք «ռեֆորմներ» անցկացնելու բուրժուական տեսակետների վրա, որոնք արտահայտվել են Իրանի իշխող դասակարգերի ներկայացուցիչների ելույթներում, հրապարակախոսային հոդվածներում և աշխատություններում։ Նախապես ասենք, որ ֆեոդալական-կալվածատիրական կարգերի առկայության և պահպանման պայմաններում գյուղատնտեսության բնագավառում և կալվածատերերի ու գյուղացիների հարաբերությունների վերաբերյալ իշխող դասակարգերի ներկայացուցիչների կողմից ինչպիսի տեսակետներ էլ, որ առաջ քաշվեն, և ինչպիսի օրենքներ էլ, որ անցկացվեն, դրանք միշտ էլ ուղղված կլինեն հենց նույն կալվածատերերի շահերի պաշտպանմանն ու ապահովմանը։ Այստեղ պետք է նշել, որ անգամ այս պոչատ «ռեֆորմների» առաջարկները անհանգստացնում էին ամերիկյան իմպերիալիստներին։ Նրանք այդ «ռեֆորմների» ինչ-որ վտանգավոր հետևանքներով ցանկանում էին և են ահաբեկել Իրանի իշխող դասակարգերին. այսպես «Middle East Journal»-ը գրում է. «Չնայած աճող թվով իրանացիներ գալիս են այն գիտակցության, թե ինչքան կարևոր է գյուղատնտեսական աշխատավորի դրության բարելավումը, այդուհանդերձ մեծապես կասկածելի է այն, որ հողատեր արիստոկրատիայից շատերը իրենց մտածելակերպում իրականում հասած լինեն այնպիսի կետի, որ նրանք լրջորեն ընդունեն հետևանքներով լի ռեֆորմների դաղափարը, որը կարող է վտանգել նրանց հարստությունը և քաղաքական իշխանությունը»[20]։

Բնական է, որ ոչ մի ագրարային արմատական ռեֆորմի չի կարելի հույս ունենալ այնպիսի երկրում, որը «պրակտիկայում կառավարվում է հազար հարուստ ընտանիքների կողմից։ Նրանց է պատկանում հողը, նրանք են կազմում՝ կառավարությունը, մեջլիսը, նրանք են հսկում ֆինանսներին և բանակին...»[21]։ Ինչ կարելի է սպասել մի մեջլիսից «որի դեպուտատների մեծամասնությունը կամ պատկանում են կալվածատիրական դասակարգին, կամ կախում ունեն

---

[18] «Լուր» (اطلاعات) «Էթթելաաթ», 1952, ապրիլ 16։

[19] (داد) «Դադ», 1950, մարտի 6։

[20] „Middle East Journal", 1951, № 2, p. 181.

[21] „Tribune", 1946, Jan. 18, London, № 473, p. 7.

նրանցից, մի փաստ, որը հողային ռեֆորմի անցկացումը դարձնում է շատ ավելի դժվար»[22]։

Իրանական գյուղի թշվառ վիճակի բարելավման համար իշխող խավերի կողմից նորանոր ռեցեպտներ են առաջարկվում, այսպես՝ իրանական բուրժուազիան այն կարծիքին է, որ այդ թշվառության վերացման միակ ուղին կապիտալի ներդրումն է գյուղատնտեսական աշխատանքներում։ Օրինակ՝ Թաբրիզիզադեն «Իրանի տնտեսական կյանքը և նրա սաստիկ աղքատության բուժման եղանակը» վերնագրով իր աշխատության մեջ «սոսկալի աղքատության պատճառը» համարում է «արտադրության ցածր մակարդակը», իսկ արտադրության ցածր մակարդակը արդյունք է «աշխատանքի և տնտեսական ակտիվության ցածր մակարդակի», իսկ այս վերջինն էլ «տնտեսական հասունության և աճի պակասի», որտեղ աշխատանքը չի «քաջալերվում և հասարակության մեջ համարվում է ստոր ու ատելի մի երևույթ»։ Թաբրիզիզադեն այն կարծիքին է, թե գյուղատնտեսության եկամուտները շատ ցածր լինելով, մարդիկ (հասկանալ կապիտալիստները — Հ. Ն.) իրենց «աշխատանքը և կապիտալը» չեն ներդնում այդ գործի մեջ, որովհետև դա թե՛ եկամուտ չի խոստանում և թե՛ ապահովություն չունի։ Իսկ ի՞նչ անել որպեսզի գյուղատնտեսությունը վերելք ապրի, հետևաբար և «սոսկալի թշվառ կյանք ունեցող բնակչության ավելի քան 80 տոկոսը» փրկվի այդ դրությունից։ Թաբրիզիզադեն առաջարկում է «բարձրացնել գյուղատնտեսական աշխատանքների եկամուտը, և դրանից ելնելով քաջալերել և երաշխավորել գյուղատնտեսական արտադրության համար ներդրված աշխատանքն ու կապիտալը»[23]։

Ինչպես տեսնում ենք, սա զուտ բուրժուական տեսակետ է, որը նպատակ ունի ապահովել կապիտալի նորանոր ներդրումներ գյուղատնտեսության բնագավառում։

Իրանում ագրարային հարցի «մասնագետ» է համարվում նաև մեջլիսի նախկին դեպուտատ Ֆարհուդին, որը բազմիցս մեջլիսում հանդես է եկել ագրարային հարցի կապակցությամբ։ «1952—53 թթ. Իրանի տարեգրում» Ֆարհուդին ներկայացրել է իր նախագիծը, այսպես կոչված «Ֆարհուդիի ծրագիրը գյուղացիության դրությունը բարեկարգելու մասին»[24]։ Ֆարհուդին՝ ի տարբերություն Թաբրիզիզադեի, Իրանի «գյուղերում ապրող 15 միլիոն գյուղացիության» «աղքատության և թշվառության» պատճառներից մեկը համարում է նաև «կալվածատիրոջ վատ վերաբերմունքը գյուղացու նկատմամբ»։ Գյուղացու և կալվածատիրոջ հարաբերությունների հիմքում ընկած հինգ տարրերի պրակտիկան նա համարում է «ամենաարդար եղանակներից մեկը, որը երբևիցէ հնարավոր է գյուղատնտեսության մեջ կիրառել», որովհետև «Իրանում գյուղա-

[22] „Current History", 1952, May, № 129, p. 275.

[23] Ջ ա վ ա դ Թ ա բ ր ի զ ի զ ա դ ե. Իրանի տնտեսական կյանքը և նրա սաստիկ աղքատության բուժման եղանակը, Թեհրան, 1916, էջ 69—70։

جواد تبریزی زاده زندگی اقتصادی ایران وراه چاره فقر شدید آن تهران ۱۹٤٦.

[24] «1952—53 թթ. Իրանի տարեգիրքը», Ֆարհուդիի ծրագիրը գյուղացիության դրությունը սարեկարգելու մասին, Թեհրան, էջ 177—198։

سالنامه کشور ایران ۱۳۳۱ تهران ۱۹۵۲—۵۳ صفحه ۱۷۷—۱۹۸ طرح فرهودی راجع باصلاح حال کشاورزان.

ցու հետ կալվածատիրոջ վերաբերմունքի հիմքը աշխատանքի մեջ մասնակցելն է և ոչ թե գյուղացու վարձակալությունը»։ Իսկ ինչո՞ւ է ապա գյուղացիության վատ վիճակի պատճառներից մեկը նա համարում «կալվածատիրոջ վատ վերաբերմունքը գյուղացու նկատմամբ»։ Դրան նա պատասխանում է այսպես, որ ժամանակի ընթացքում կալվածատերերի նյութական հզորությունը աճել է, և գործնականում նրանք գյուղացիների բաժնի նկատմամբ ոտնձգություն են արել»։ Իսկ որո՞նք են այդ ոտնձգությունները, Ֆարհուդին պատասխանում է. «Բերքի նախապես գնումը կամ նատուրալ պարհակների պարտադրումը, ինչպես օրինակ՝ որոշ քանակի յուղի, հավի, ձվի, ոչխարի, ցախի, մինչև իսկ հացի գանձումը գյուղացիներից, կամ բեգարային աշխատանք պահանջելը», որի հետևանքով այսօրվա Իրանում գյուղացիները «այնպիսի աղքատության և թշվառության մեջ են, որի պատկերացնելը սարսափելի է և ավելին պատկերացնել չի կարելի»։ Իսկ ո՞րն է այդ դրությունից դուրս գալու ելքը։ Ֆարհուդին հայտարարում է, որ կա երկու եղանակ, այն է՝ «Հողերի բաժանումը գյուղացիների միջև և կալվածատիրոջ ու գյուղացու հարաբերությունների վերանայումը»։ Իսկ ո՞ր եղանակով պետք է լուծել հարցը. հեղինակի կարծիքով՝ «Իրանի գյուղացիության դրության բարելավման համար հողերի բաժանման եղանակը, բացարձակապես ընդունելի չէ...»։ Հողերի բաժանումը կարելի է իրականացնել միայն այն ժամանակ, երբ «գյուղացիները բավարար տնտեսական և հասարակական հասունություն ունենան» և «հողագործական աշխատանքների համար կալվածատիրոջ բարոյական ազդեցության և նյութական օգնության կարիքը չզգան»։ Ֆարհուդին կողմնակից է երկրորդ եղանակին, այսինքն կալվածատիրոջ և գյուղացու հարաբերությունների վերանայմանը։ Նա առաջարկում է, որ անպայման կիրառել հինգ տարրերի պրակտիկան, միայն ոչ թե բերքը հինգ մասի բաժանել, այլ աշխատանքի բաժինը երկու անգամ ավելին սահմանել, քան մյուս տարրերի բաժինը, այսինքն բերքը հինգ մասի բաժանելու փոխարեն, վեց մասի բաժանել, որից երկու մասը գյուղացուն աշխատանքի դիմաց, իսկ մնացածն էլ ըստ տարրերի պատկանելիության։ Բայց չպետք է կարծել, որ Ֆարհուդին առաջարկում է այդ նորաստեղծ մասը տալ գյուղացուն։ Ոչ, նա առաջարկում է այդ 1/6-րդ մասը հատկացնել մի կազմակերպության, որը կզբաղվի գյուղացիների ապահովության գործով։ Բերքը վեց մասի բաժանելու իր առաջարկը հիմնավորելու համար Ֆարհուդին հասնում է այնպիսի ցինիզմի, որ հայտարարում է, թե ինքը «բողոքում է» գյուղացուն և եղան մի շարքում դասելու դեմ, քանի որ «ինչպես դուք ինքներդ կհաստատեք պարոնայք, գյուղատնտեսության մեջ գյուղացու մասնակցությունը և ազդեցությունը եզից ավելին է, որովհետև եզը միայն վարելուն է մասնակցում, մինչդեռ գյուղացին թե՛ վարելուն է մասնակցում, և թե՛ ջրելու համար դիշերներն է անքուն մնում, մյուս կողմից՝ կենդանին միայն ինքն է ուտում, բայց գյուղացին պետք է երեք չորս հոգի ուրիշների էլ կերակրի...»[25]։

Ինչպես տեսնում ենք, Ֆարհուդին հանդես է գալիս ֆեոդալական-կալվածատիրական հարաբերությունների պաշտպանի դերում և աշխատում է՝ մեղ-

[25] «1952—53 թթ. Իրանի տարեգիրք», Թեհրան, Ֆարհուդիի ծրագիրը գյուղացիության դրությունը բարելավելու մասին, էջ 133։

سالنامه کشور ایران ۱۳۳۱ تهران ۵۳—۱۹۵۲ طرح فرهودی راجع باصلاح حال کشاورزان صفحه ۱۸۸.

մացնելով կալվածատերերի ոտնձգությունները, անձեռնմխելի պահել ներկա գրությունը։

Նավթի ազգայնացման համաժողովրդական պայքարի տարիներին, երբ բանվորական և գյուղացիական բազմամիլիոն մասսաները ոտքի ելան անգլիական իմպերիալիզմի դեմ, օրակարգի հարց դարձավ նաև ագրարային հարցը, որը վաղուց էր սպասում իր լուծմանը։ Մոսադդիկի կառավարությունը այդ հարցում հանդես եկավ, որպես խոշոր կալվածատերերի շահերի պաշտպան։ Նրա անցկացրած 20 տոկոսի օրենքի մասին մենք կանդրադառնանք մի այլ առիթով. այժմ կանգ առնենք ագրարային հարցի մասին նրա կառավարության ընդհանուր քաղաքականության վրա, որն իր արտահայտությունն է գտել գյուղատնտեսության մինիստրի պաշտոնակատար Մանսուր Աթայու տեսակետներում։

Աթային հայտարարում է, որ կալվածատերերը մեծ պարտականություններ են կատարում և «իրենց վրա են վերցրել արտադրական տարրերի կապի պարտականությունը և իրականում գյուղատնտեսական հարստությունների պատասխանատուն և երաշխիքն են»։ Կալվածատերերը ոչ միայն հին սովորություններով գյուղերը կառավարում են, այլ նաև «պահում են ռայաներին»։ Գյուղացիները «վարժվել են ծուլության», իսկ կալվածատերերը «ստիպում են նրանց աշխատել», բացի այդ, «ձմռանը և երաշտի տարիներին նրանց օգնում են», կանաթները և առուները մաքրում են, նորոգում և օգտագործելի վիճակում պահում։ Աթային այս ամենը նշում է ապացուցելու համար, որ կալվածատերերի գոյությունը անհրաժեշտություն է։ Աթային դեմ է, որ խալիսե կամ շահի հողերը գյուղացիների միջև ձրի բաժանվի, որովհետև դա «չբաժանվող գյուղերի ռայաների նախանձի պատճառ կդառնա», որը վտանգ կստեղծի մյուս կալվածատերերի համար։

Կալվածքները կարելի է բաժանել երկու եղանակով՝ «կամ պետք է կալվածատիրոջը զրկել սեփականության իրավունքից, կամ կալվածքը դրամով պետք է նրանից գնել և գյուղացիների մեջ բաժանել»։ Իսկ այդ երկուսից ո՞ր մեկն է նպատակահարմար։ Աթային գտնում է, որ ոչ մեկը։ «Առաջին եղանակը,— հայտարարում է նա,— Իսլամի կրոնին և կոնստիտուցիային հակառակ է», իսկ «երկրորդ եղանակով, եթե ուզենանք կալվածատիրոջը բավարարել և կալվածքի գինը նրան վճարել, հսկայական գումարի կարիք կզգացվի, և ներկա վիճակում այդպիսի քայլին դիմելը կառավարության համար հնարավոր չէ»։ Բացի դրանից, կալվածատիրական հողերի բաժանումը կունենա նաև մի ուրիշ «անհամեմատ խիստ վտանգավոր հետևանք». այն է՝ «կալվածատերերը կաղբատանան», իսկ «տեղյակ և կրթված աղքատի դժգոհությունը անհամեմատ ավելի վտանգավոր է, քան պարզամիտ գյուղացու չքավորությունը»։ Աթային հայտարարում է, որ ոմանց կարծիքով կալվածատերերը դաժանաբար են վերաբերվում գյուղացիների հետ և հողերի բաժանման դեպքում գյուղացիները կազատվեն այդ ոտնձգություններից և նա ընդունում է, որ «որոշ շրջաններում այդ խնդիրը մասամբ ճիշտ է», բայց նա «լրջորեն կասկածում է» հողերի բաժանմամբ գյուղացիների փրկությանը, «որովհետև, քանի դեռ մարդկանց դիտելիքները, այսինքն լուսավորության, կրոնի և հավատքի մակարդակը երկրում բարձր չէ, հողերը բաժանելուց հետո էլ, առաջվա պես, ամեն մի հասկացող և ճարպիկ մարդ կիշխի և կշարաշահի պարզ և անտեղյակ մարդուն»։

Հարց է ծագում, իսկ ինչ պետք է անել։ Աթային այդ հարցին պատասխանում է, որ չնայած «շատ ընդարձակ հողերի ու բազմաթիվ գյուղերի պատկանելիությունը մեկ մարդու և գյուղերի ու հողերի բաժանումը փոքրիկ կտորների, երկուսն էլ երկրի գյուղատնտեսության ապագայի համար վնասակար և վտանգավոր են», բայց «եթե գյուղացին և կալվածատերերը ձեռք-ձեռքի տալով բերքի քչության հիմնական պատճառը հանդիսացող վարելահողերի աղքատությանը դարման անեն, երկուսն էլ կերջանկանան»[26]։ Այլ կերպ՝ նա քարոզում է կալվածատիրոջ և գյուղացու հաշտեցում և համերաշխ «ձեռք-ձեռքի տված» աշխատանք։

Ինչպես տեսնում ենք, Մոսադդիկի կառավարությունն էլ հանգես էր գալիս կալվածատերերի շահերի պաշտպանի դերում և ամեն գնով աշխատում էր ոչնչացնել հողերը գյուղացիներին բաժանելու գաղափարը, մեկ այն հայտարարելով «կրոնին և կոնստիտուցիային» հակառակ և մեկ էլ անիրագործելի ու աննպատակ։

* * *

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և նրանից հետո ընկած ժամանակաշրջանում խորն անկում ապրեց Իրանի գյուղատնտեսությունը։ Տասնյակ հազարավոր քայքայված և թշվառության ենթարկված գյուղացիներ ստիպված եղան թողնել գյուղը և դիմել դեպի քաղաք, որտեղ և նրանք լրացրին առանց այդ էլ բազմամարդ գործազուրկների, սովալլուկների և թափառաշրջիկների բանակը։ Իրանի էկոնոմիկայի ճգնաժամը ուղղակիորեն կապված է ամերիկյան և անգլիական իմպերիալիստների տնտեսական և քաղաքական ներթափանցման ուժեղացման հետ։ Իմպերիալիստները, ձգտելով առավելագույն շահույթի, Իրանը ենթարկում են անսահման շահագործման, թալանում են նրա բնական հարստությունները և քայքայում էկոնոմիկան։ Այդ բոլորի հետևանքով երկրում ծավալվեց բանվորական և գյուղացիական հզոր շարժում։

Իրանի բազմամիլիոն գյուղացիությունը, բանվոր դասակարգի և նրա ավանգարդ «Թուդեհ» պարտիայի առաջնորդությամբ ոտքի կանգնեց ազատություն և հող ձեռք բերելու համար։

Դեմոկրատական շարժման ընդարձակման, հատկապես գյուղացիական հուզումների և պոռթկումների հաճախակի դառնալու հետևանքով, Իրանի իշխող դասակարգերը և նրանց շահերի պաշտպան կառավարությունը ստիպված եղան դիմել խորամանկության՝ գյուղացիության ծանր վիճակը բարելավելու կեղծ խոստումների ու միջոցառումների։ Այդ բոլորը ուղղված էր երկրում իշխող ագրարային հարաբերությունների պահպանման և գյուղացիական շարժումներին վերջ տալու նպատակին։ Իրանական շահագործող դասակարգերին այդ գործում հովանավորում էին ամերիկյան և անգլիական իմպերիալիստները, որոնք Իրանը վերածել են իրենց արդյունաբերական ապրանքների սպառման շուկայի և հումքի բազայի։

---

[26] ՀԱՅԱՍՏԱՆ «Էթթելաաթ», 1953, հուլիսի 5։ Գյուղատնտեսության մինիստրի պաշտոնակատար ինժեներ Մ. Աթայու տեսակետները։

1941 թվականի հոկտեմբերին հիմնադրվեց «Իրանի ժողովրդական պարտիան» (Հեզբե Թուդեյե Իրան), որը շուտով միավորեց բանվորական, դեմոկրատական ինտելիգենցիայի և ուրիշ պրոգրեսիվ տարրերի լայն խավերին։ Ժողովրդական պարտիայի նախաձեռնությամբ կազմակերպվեցին նաև կանանց, երիտասարդության և գյուղացիության դեմոկրատական միությունները։ 1942 թվականին Թեհրանում գումարված պարտիայի առաջին կոնֆերանսը մի շարք պահանջներ առաջ քաշեց, այդ թվում կառավարության դեմոկրատացումը և նրա վերակազմումը Իրանի բնակչության լայն խավերի ներկայացուցիչներից, խոշոր կալվածատերերի հողերի գնումը և բաժանումը գյուղացիների միջև, Ռիզա շահի հողերի բաժանումը, բանվորական 8-ժամյա աշխատանքի սահմանումը, աշխատանքային օրենսդրության անցկացումը և այլն։

Ժողովրդական պարտիայի օրգան «Ռահբար» թերթը 1943 թվականի փետրվարին գրում էր. «Հողը հանդիսանում է գյուղացու սեփականությունը։ Գյուղատնտեսության հետամնացության պատճառներից մեկը հանդիսանում է միջնադարյան կալվածատիրական ռեժիմը։ Գյուղացիները կազմում են երկրի բնակչության մինչև 90 տոկոսը և հանդիսանում են ամենաճնշված դասակարգը։ Այդ հետամնացության և դժբախտության պատճառը խոշոր կալվածատիրական հողատիրությունն է... Միջնադարյան կալվածատիրական ռեժիմը կասեցնում է հողագործության զարգացումը և նպաստում է կալվածատերերի քաղաքական դիրքի ուժեղացմանը»։

1942 թվականին ագրարային հարցում պարտիայի առաջ քաշած լոզունգները Իրանի քաղաքական դրության զարգացման համապատասխան էվոլյուցիա ունեցան։ Այսպես. 1944 թվականի օգոստոսին գումարվեց պարտիայի առաջին համագումարը, որը և հաստատեց պարտիայի ծրագիրը։ Ծրագրում ասվում էր. «Հեզբե Թուդեյե Իրանը» շահագործվող դասակարգերի, այսինքն բանվորների, գյուղացիների, ազատասեր ինտելիգենցիայի և արհեստավորների պարտիա է». այնուհետև՝ «Հեզբե Թուդեյե Իրանը» պայքարում է հին ռեժիմների տնտեսական մնացորդների դեմ, ինչպիսիք են քոչվոր, ֆեոդալական տնտեսության մնացորդները. նա կոլմնակից է զարգացած, կենտրոնացած և Իրանի մասսաների շահերը պաշտպանող տնտեսության»։

Ծրագրի գյուղատնտեսական բաժնում ասվում էր.

1) Անհրաժեշտ ռեֆորմներ մտցնել երկրագործության բնագավառում հետևյալ կերպ՝ վարուցանքի համար պետական կալվածքները և հողերը անվճար հանձնել հողազուրկ գյուղացիներին.

2) Պետության միջոցներով գնել խոշոր կալվածքները և բաժանել գյուղացիների միջև վճարման տարաժամկետներով.

3) Չքավոր գյուղացիներին նյութական օժանդակություն ցույց տալ գյուղատնտեսական բանկի միջոցով և ընդարձակել հողի մշակումը գյուղացիների վիճակը բարելավելու համար.

4) Հիմնական ռեֆորմներ անցկացնել կալվածատիրոջ և գյուղացու միջև բերքի ոչ արդարացի բաշխման կապակցությամբ։ Օրենքներ հաստատել բերքի բաշխման հին կարգը և սովորությունները վերացնելու համար.

5) Թեղխուդայի նշանակումը ընտրական հիմքերի վրա դնել.

6) Գյուղերում դպրոցներ և սանիտարական հիմնարկներ հիմնել՝ ընդհանուր կրթություն մտցնելու և գյուղի առողջապահական վիճակը բարելավելու նպատակով.

7) Ջրի կանալներ անցկացնել և արտեզյան ջրհորներ փորել, ամբարտակներ կառուցել և երկրի ոռոգումը գիտական մեթոդներով ընդարձակել, լիովին օգտագործել գետերը[27]։

Այս և մի քանի ուրիշ կետերով պարտիան իր լոզունգներն էր առաջ քաշում ագրարային հարցի վերաբերյալ։

1944 թվականին կազմակերպվեց «Իրանի գյուղացիության միություն» պրոգրեսիվ կազմակերպությունը, որն իր ծրագրում պահանջում էր «արդարացի հարաբերություններ հաստատել կալվածատերերի և գյուղացիների միջև», միջոցառումներ կիրառել այն ուղղությամբ, որպեսզի հողազուրկ գյուղացիները հարմար գնով գնեն պետական և շահի հողերը, օրենք հրատարակել սահմանափակելու գյուղացիական հողերի վաճառքը, վերադարձնել գյուղացի խորդեմալիքներին բոլոր այն հողերը, որոնք բռնի կերպով նրանցից վերցվել և ամլաքային սեփականության են վերածվել, վերացնել բեգարության բոլոր ձևերը, ամեն ձևի պարհակները, նվերները, գյուղացիներին օգնություն ցույց տալ տարերային աղետների և անբերրի տարիներին, գյուղատնտեսական բանկ կազմակերպել քաղաքներում և բաժանմունքներ գյուղերում, վերջ տալ չինովնիկների չարաշահումներին, գյուղատնտեսական միություններ կազմակերպել գյուղատնտեսության մեխանիզացիայի գործում գյուղացիներին օգնություն ցույց տալու համար, կազմակերպել ձրի բուժում, կազմակերպել ձրի իրավաբանական կոնսուլտացիա գյուղացիներին բռնությունից պաշտպանելու համար, բարելավել ոռոգման սիստեմը և այլն, և այլն։

Ինչպես տեսնում ենք, «Թուդե» պարտիայի և գյուղացիական միության ծրագրերի մեջ այս էտապում դեռևս հստակ կերպով չէր դրվում ամբողջ կալվածատիրական հողերի բռնագրավումը և անփոխարինաբար գյուղացիների միջև բաժանելու խնդիրը, այլ միայն առաջ էր քաշվում պետական հողերի բաժանման, խոշոր կալվածատիրական հողատիրության սահմանափակման և նշանակալից չափով գյուղացիության դրության բարելավման հարցը։

Բայց չնայած դրան, միլիոնավոր իրանական գյուղացիներ, որոնք ապրում էին կիսաքաղց վիճակում և տառապում էին մարդկային ուժերից վեր կոռային աշխատանքներից, պարհակներից և կալվածատերերի ու չինովնիկների կամայականություններից, իրենց հայացքը ուղղեցին դեպի Ժողովրդական պարտիան, որը հանդես էր գալիս նրանց շահերի պաշտպանի դերում։ 1946 թվականի աշնանը Ժողովրդական պարտիայի ղեկավարությամբ միության մեջ ընդգրկվել էին մոտ կես միլիոն գյուղացիներ։ Ժողովրդական պարտիայի հռգատարությունը գյուղացիության կարիքների նկատմամբ գրավում էր իրանական գյուղացիության համընդհանուր համակրանքը, և շուտով, ինչպես հայտարարեց Ժողովրդական պարտիայի ղեկավարներից դոկտոր Քեշավարզը, Ժողովրդական պարտիայի և նրան կից պրոֆմիությունների, երիտասարդական, կանանց և գյուղացիական միությունների անդամների թիվը հասավ մինչև մեկ միլիոնի։

Իրանի պատմության մեջ առաջին անգամ էր աշխատավորական մասսաների այդպիսի խոշոր կազմակերպություն ստեղծվում, որը պայքարում էր նեխված և իր դարն ապրած սոցիալ-տնտեսական կարգերը խորտակելու և

[27] Տես՝ «Հակաֆաշիստ թերթ», Թավրիզ, 1944, հոկտեմբերի 1։

բանվոր դասակարգին ու գյուղացիական հոծ մասսաներին միջնադարյան շահագործումից ազատագրելու համար։

1948 թվականի ապրիլի 23—26-ը Թեհրանում գումարվեց ժողովրդական պարտիայի երկրորդ համագումարը, որը մի շարք այլ հարցերի թվում քննարկեց և համապատասխան որոշումներ ընդունեց նաև գյուղացիական շարժումների մասին։ Երկրորդ համագումարից հետո ամբողջ Իրանում գյուղացիական շարժումները էլ ավելի մեծ թափ ստացան և պարտիան առաջ քաշեց ագրարային հարցի լուծման միակ ճիշտ լոզունգը՝ ամբողջ հողը անվճար կերպով տալ գյուղացուն։ Պարտիայի օրգան «Ռեսուլե Այենդե» թերթը, արտահայտելով ամբողջ գյուղացիության ցանկությունը, գրում էր. «Հողերի բաժանումը պետք է կատարվի։ Դա մի երևույթ է, որ ոչ միայն գյուղացիները, այլ Իրանի բոլոր ազատասերներն են ցանկանում։ Բայց հողերի բաժանումը, և դեմոկրատական իրավունքների ամրապնդումը, ինչպես և ամերիկյան օկուպացիոն ուժերի ու անգլիական գաղութարարական տարրերի վտարումը, մի գործ է, որը պետք է կատարվի Իրանի բանվոր դասակարգի ղեկավարությամբ և ժողովրդի միացյալ ճակատի ընդարձակ պայքարի միջոցով։ Հողերի բաժանումը պետք է անվճար լինի... Մինչև իսկ հողերի անվճար բաժանումն էլ բավական չէ, պետք է դավաճան խոների ունեցվածքի բռնագրավումից և ազգային եկամուտի մյուս աղբյուրներից օգնել հող ստացած գյուղացիներին որպեսզի նրանք կարողանան, անհրաժեշտ դրամագլուխ և միջոցներ ունենալով, գյուղատնտեսությունը մեխանիզացնեն և արորից ու գութանից, այդ մի քանի դար առաջվա մնացուկներից, հրաժարվեն»[28]։

Հանուն ամբողջ կալվածատիրական հողերի նացիոնալիզացիայի և անփոխարինարար գյուղացիների միջև բաժանելու պայքարը, դարձավ ագրարային հարցում Իրանի աշխատավորական հոծ մասսաների գլխավոր լոզունգը։ Իրանական պրոգրեսիվ մամուլը կոչ էր անում, խոշոր կալվածատերերի և ֆեոդալների կալվածքները անփոխարինարար բաժանել գյուղացիների միջև։ «Զեղդե Էսթեմար» թերթը գրում էր. «Իրանական գյուղացիները խոշոր կալվածատիրության, ֆեոդալիզմի և ճորտատիրության մնացուկների վերացման, հող և ազատություն ձեռք բերելու համար են պայքարում և ոչ թե կալվածատիրական բաժնի 10 կամ 15 տոկոս ձեռք բերելու համար (Նկատի ունի Կավամ էս Սալթանեի և Մոսադդիկի կառավարությունների ագրարային օրենքները—Հ. Ե.). վարելահողերի ամբողջ բերքը պատկանում է հողի վրա աշխատող գյուղացիներին։ Իրանի գյուղացիներ, ձեզ է պատկանում ամբողջ բերքը այն հողի, որի վրա դուք աշխատում եք։ Խոշոր կալվածատիրությունը, ֆեոդալիզմի և ճորտության մնացուկները ոչնչացնելու և հող ու ազատություն ձեռք բերելու համար միացեք և պայքարեցեք»[29]։

Գյուղացիներին օգնություն ցույց տվող միությունը մի հատուկ նամակով Իրանի այն ժամանակվա պրեմիեր-մինիստր դոկտոր Մոսադդիկից պահանջում էր անցկացնել հետևյալ օրենքը։

«1. Բոլոր հողազուրկ և սակավահող գյուղացիներին բավարար չափով հող, ջուր և վարուցանքի միջոցներով ապահովելու համար, պետք է ֆեոդալ-

[28] (رسوی ، آینده) «Ռեսուլե Այենդե», 1952, հունիսի 4։

[29] (ضد استعمار) «Զեղդե Էսթեմար», 1952, օգոստոսի 17։

ների, խաների և խոշոր կալվածատերերի ամբողջ ընդարձակ ցանքսային կալվածքները բաժանել գյուղացիների միջև այնպես, որ գյուղացիները ձրի և անփոխարինարար բավարար չափով հող, ջուր և վարուցանքի միջոցներ ձեռք բերեն։

Ծանորություն.— Գյուղացիների բոլոր պարտքերը խոշոր կալվածատերերին, խաներին և ֆեոդալներին վերջնականապես պետք է չեղյալ համարվեն.

2. Պետական խալիսե հողերն ու կալվածքները, ինչպես և շահի բռնագրաված բոլոր կալվածքները ձրի և անփոխարինարար բաժանել գյուղացիների միջև.

Ծանորություն.— Այսպես կոչված վակֆային Փեհլևի հողերի վաճառքի դիմաց գյուղացիներից գանձված ամբողջ գումարը պետք է վերադարձվի նրանց։ Խալիսե և շահի կալվածքների վրա աշխատող գյուղացիների բոլոր պարտքերը կառավարությանը և Փեհլևի կալվածքների վարչությանը պետք է չեղյալ համարվեն։

Քանի դեռ հողը գյուղացիներին չի տրվել գյուղացու և կալվածատիրոջ միջև բերքի բաշխման կարգը պետք է վերանայվի հօգուտ գյուղացու. այնպես, որ բոլոր ցանքսերի՝ անկախ նրանց ջրովի կամ անջրդի լինելուց և ամեն տեսակի կուլտուրաների՝ հացահատիկի և ընդեղենների, կերի ու տեխնիկական կուլտուրաների, ծառերի և այլ բերքի կալվածատերերի բաժնից պետք է 50 տոկոս պակասեցնել ու ավելացնել գյուղացու բաժնին։

Ծանորություն.— Այս կարգը պետք է կիրառվի նաև 1331 (1952) բերքի նկատմամբ»[10]։

* * *

Ինչպես տեսնում ենք, իրանական ռեակցիոն շրջանները ամերիկյան և անգլիական իմպերիալիստների անմիջական հովանավորությամբ ձգտում են կոնսերվացիայի ենթարկել և կայունացնել Իրանում իշխող ֆեոդալա-կալվածատիրական հարաբերությունները։ Բայց իրանական գյուղացիությունը արդեն արթնացել է։ Վերջին տասնամյակներում Իրանում ծավալվել է գյուղացիական շարժում։ Իրանի բազմամիլիոն գյուղացիությունը բանվոր դասակարգի առաջնորդությամբ ոտքի է կանգնել ազատություն և հող ձեռք բերելու համար։

[10] (10) «ռեհա», 1952, սեպտեմբերի 28։